ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը
Սերգեյ Շահնազարյան
ՀՀ ֆինանսների նախարարության գնումների քաղաքականության վարչության պետ

2. Գործուղման վայրը և ժամկետները.
Ռուսաստանի Դաշնություն (ք. Մոսկվա), 2023թ. հունիսի 21-ից 23-ը

3. Հրավիրող կողմը.
Եվրասիական տնտեսական հանձնաժողով

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).
Մասնակցություն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի գնումների խորհրդատվական կոմիտեի նիստին

5. Քննարկված թեմաները
- ԵԱՏՄ պայմանագրով գնումներին վերաբերող կարգավորումներում փոփոխությունների և լրացումների կատարում.
- անդամ պետությունների կողմից գնումների հաշվետվությունների ներկայացման համակարգի կատարելագործում.
- պետական մասնակցությամբ կազմակերպությունների կարիքների համար կազմակերպվող գնման ընթացակարգերին անդամ պետությունների ռեզիդենտների մասնակցության հնարավորության ստեղծում

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.
Հանդիպման ընթացքում հայկական կողմի ներկայացուցիչները առաջարկել են քննարկման առարկա դարձնել նաև էլեկտրոնային աճուրդով իրականացվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների՝ ԵԱՏՄ պայմանագրով սահմանված ցուցակի ոչ պարտադիր կիրառելի լինելը բացառող կարգավորումները:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հանդիպման մասնակից երկրների ներկայացուցիչների միջև տեղի են ունեցել տարաբնույթ քննարկումներ՝ գնումների ոլորտում բարեփոխումների իրականացման փորձի փոխանակման ուղղություններով:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Հայկական կողմի ներկայացուցիչների առաջարկը նախնական ընդունելի է համարվել կոմիտեի անդամների կողմից: Պայմանավորվածություն է ձեռք բերվել փորձագետների մակարդակում սկսել նախագծի մշակման աշխատանքները և այն բովանդակային քննարկման առարկա դարձնել կոմիտեի հաջորդ նիստի ընթացքում:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

28.06.2023թ.